Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Վ/16-2022

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԻ ՄՈՏ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 16-ԻՆ ԺԱՄԸ 16:00-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ՝ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

քաղ. Երևան
Մասնակցում էին՝

Գ. Ջհանգիրյան	ՀՀ բարձրագույն դատական խորհրդի նախագահի պաշտոնակատար
Մ. Գրիգորյան	ՀՀ փոխվարչապետ
Կ. Անդրեասյան	ՀՀ արդարադատության նախարար
Ա. Դավթյան	ՀՀ գլխավոր դատախազ
Վ. Վարդանյան	ՀՀ ԱԺ-ի պատգամավոր, պետական-իրավական մշտական հանձնաժողովի նախագահ
Ա. Ջուլհակյան	ՀՀ ԱԺ-ի պատգամավոր
Լ. Թադևոսյան	ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահ
Ս. Խաչատրյան	ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի նախագահ
Հ. Հարությունյան	Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի նախագահ
Ա. Փաշինյան	Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամ
Լ. Ալեքսանյան	Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամ
Մ. Գալստյան	Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամ
Ռ. Պետրոսյան	ՀՀ պետական վերահսկողական ծառայության պետ
Բ. Բաղալյան	ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավարի տեղակալ

90a6dcc99fe1dce356831200923d05bde29ea4c55ed3d0e4d77c37d97582a15f

Ս. Թորոսյան	ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավարի տեղակալ
Ե. Թումանյանց	ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ
Է. Մկրտչյան	ՀՀ փոխվարչապետ Միեր Գրիգորյանի գրասենյակի ղեկավար
Ա. Մանուկյան	ՀՀ փոխվարչապետ Միեր Գրիգորյանի խորհրդական
Դ. Իոաննիսյան	«Իրազեկ քաղաքացիների միավորում» ՀԿ-ի ծրագրերի համակարգող

1. Հայաստանի Հանրապետության 2021 թվականի գնահատման արդյունքների վերաբերյալ զեկույց. Եվրոպայի խորհրդի Կոռուպցիայի դեմ պայքարող պետությունների խմբի (ԳՐԵԿՈ) և Տնտեսական համագործակցության զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) առաջարկությունների ներկայացում

(Երանուհի Թումանյանց, Նիկոլ Փաշինյան)

1. Ընդունել ի գիտություն ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Երանուհի Թումանյանցի կողմից ներկայացված Հայաստանի Հանրապետության 2021 թվականի գնահատման արդյունքների վերաբերյալ զեկույցը:

2. ՀՀ արդարադատության նախարար Կարեն Անդրեասյանին՝

1) ընդունել ի գիտություն ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի դիտարկումն այն մասին, որ միջազգային կազմակերպություններում Հայաստանի Հանրապետության վարկանիշը և առաջընթացի ցուցիչները խիստ կարևոր են, այդ թվում՝ Հայաստանի իմիջի և անվտանգության ապահովման տեսանկյունից: Միևնույն ժամանակ առանձնահատուկ ուշադրության կենտրոնում պետք է պահել միջազգային հեղինակավոր կազմակերպությունների կողմից ներկայացվող առաջարկների իրագործման (խորը վերլուծությունների) փուլերում կոնկրետ պետական ինստիտուտների կայացման խնդիրների լուծման հարցը՝ արդյունքում բարձրացնելով աշխատանքների արդյունավետությունը: Դրանից բացի՝ փոփոխությունների գործընթացում պետք է ապահովվի հակակոռուպցիոն բարեփոխումների քաղաքականության շարունակականությունը, որտեղ

առանցքային և կարևորագույն խնդիրը դատական համակարգի կայացումն է, երբ դատարանի վճիռը հանրության կողմից կընկալվի որպես անառարկելի իրողություն.

2) համագործակցելով ՀՀ ԱԺ-ի պատգամավոր, պետական-իրավական մշտական հանձնաժողովի նախագահ Վլադիմիր Վարդանյանի, ՀՀ հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի անդամների և Կոռուպցիայի դեմ պայքարող պետությունների խմբի (ԳՐԵԿՈ) և Տնտեսական համագործակցության զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) ներկայացուցիչների հետ՝ մանրամասն քննարկել վերջիններիս կողմից ներկայացված բոլոր առաջարկությունները, որոշ հարցերի մասով ստանալ լրացուցիչ պարզաբանումներ (օրինակ՝ ՀՀ գլխավոր դատախազի ընտրության և պաշտոնավարման ժամկետի մասով ներկայացված առաջարկը), հստակեցնել Հայաստանի դիրքորոշումները կոնկրետ հարցերի շուրջ և, ուսումնասիրելով կառավարման համանման համակարգ ունեցող երկրների փորձը, ներկայացնել առաջարկներ.

3) Կոռուպցիայի դեմ պայքարող պետությունների խմբի (ԳՐԵԿՈ) և Տնտեսական համագործակցության զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) կողմից ներկայացված առաջարկությունները քննարկման առարկա դարձնել նաև սահմանադրական հնարավոր փոփոխությունների գործընթացի շրջանակներում.

4) արտաքին անվտանգային հարցերի ապահովման տեսանկյունից, կարևորելով Հայաստանի քաղաքական իմիջը, ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ ինչպես 2022 թվականի միջազգային ցուցանիշների հրապարակման տարեկան արդյունքներով ՀՀ-ի վարկանիշային և իմիջային բոլոր ցուցիչներում (ժողովրդավարություն, խոսքի ազատություն, կոռուպցիայի դեմ պայքար, արդյունավետ կառավարում, անկախ դատական համակարգ և այլն) առաջընթաց գրանցելու, այնպես էլ առաջընթացի տեմպերի շարունակականությունն ապահովելու ուղղությամբ:

2. Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի 2021 թվականի գործունեության հաշվետվության ներկայացում

(Հայկուհի Հարությունյան, Նիկոլ Փաշինյան)

1. Ընդունել ի գիտություն Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի նախագահ Հայկուհի Հարությունյանի կողմից ներկայացված Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի 2021 թվականի գործունեության հաշվետվությունը:

2. Առաջարկել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի նախագահ Հայկուհի Հարությունյանին՝

1) պատշաճ ծանուցման մեխանիզմ ներդնելու նպատակով համագործակցել ՀՀ վարչապետի աշխատակազմի հետ և ըստ այդմ ապահովել պետական կառավարման համակարգի, ՀՀ ԱԺ-ի և այլ ոլորտների հայտարարատու հանդիսացող պաշտոնատար անձանց հայտարարագրման կարգի փոփոխությունների, վերջնաժամկետների մասին հիշեցման պատշաճ ծանուցումը.

2) օրենսդրությամբ նվերների թույլատրելի չափերը սահմանելիս հաշվի առնել բարձրաստիճան պաշտոնատար անձանց (ՀՀ նախագահ, ՀՀ վարչապետ, ՀՀ ԱԺ նախագահ և այլն) արարողակարգային հանդիպումների ընթացքում միջազգային գործընկերների հետ փոխանակվող հուշանվերների և նվերների հետ կապված հարցերը.

3) մշակել հայտարարատու հանդիսացող անձանց վերաբերող էթիկայի կանոնների առանձնահատուկ տերմինների (օրինակ՝ «բարեվարքություն» հասկացության) իմաստային ձեռնարկ կամ ուղեցույց և թրեյնինգների միջոցով ապահովել բոլոր շահառուների իրազեկվածությունը.

4) պետական գնումների համակարգի մոնիթորինգային գործընթացում ևս կիրառել թվային օրակարգին համահունչ, ինքնաշխատ մեխանիզմ.

5) շահագրգիռ բոլոր կողմերի, այդ թվում՝ ՀՀ ԱԺ-ի ներկայացուցիչների հետ մշտապես քննարկել հայտարարագրման գործընթացի լավարկման բովանդակային հարցերը և ըստ այդմ ներկայացնել առաջարկություններ.

6) ՀՀ փոխվարչապետ Միհեր Գրիգորյանի առաջարկությամբ նախատեսել հայտարարատու հանդիսացող պաշտոնատար անձանց տարեկան վարկանիշ շնորհելու (վարկանշման) համակարգ, որի արդյունքում ցածր վարկանիշ ունեցող պաշտոնատար անձն ինքնաշխատ եղանակով կհայտնվի Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի ուշադրության կենտրոնում.

7) ՀՀ ԱԺ-ի պատգամավոր Արուսյակ Ջուլհակյանի առաջարկությամբ քննարկել հայտարարագրերում կանխիկ միջոցների համար առավելագույն սահմանաչափ նախատեսելու նպատակահարմարության հարցը.

8) «Իրազեկ քաղաքացիների միավորում» ՀԿ-ի ծրագրերի համակարգող Դանիել Իոաննիսյանի առաջարկությամբ դիտարկել հայտարարագրի ներկայացման համար սահմանված ժամկետի (հաշվետու ժամանակաշրջանի վերաբերյալ հայտարարագիրը պետք է ներկայացվի ժամկետի ավարտից 5 ամիս հետո) կրճատման նպատակահարմարության հարցը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ հայտարարատուն տարեսկզբի տվյալը կարող է ճշգրիտ չներառել տարեկան հայտարարագրում՝ զուտ երկար ժամանակ անցած լինելու և ստույգ չհիշելու պատճառով:

3. Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն կոմիտեի քննիչների և օպերլիազորների ընտրության ընթացքում առաջ եկած խնդիրների և այդ խնդիրների լուծմանն ուղղված առաջարկների ներկայացում

(Դանիել Իոաննիսյան, Նիկոլ Փաշինյան)

1. Ընդունել ի գիտություն «Իրազեկ քաղաքացիների միավորում» ՀԿ-ի ծրագրերի համակարգող Դանիել Իոաննիսյանի կողմից ներկայացված Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն կոմիտեի քննիչների և օպերլիազորների ընտրության ընթացքում առաջ եկած խնդիրների և այդ խնդիրների լուծմանն ուղղված առաջարկները:

2. ՀՀ արդարադատության նախարար Կարեն Անդրեասյանին՝

1) ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի նախագահ Սասուն Խաչատրյանի, ՀՀ ոստիկանության պետ Վահե Ղազարյանի, ՀՀ ազգային անվտանգության ծառայության տնօրեն Արմեն Աբազյանի հետ քննարկել ֆիզիկական պատրաստվածության կամ

առողջական վիճակով պայմանավորված, կամ հաշմանդամություն ունեցող արհեստավարժ մասնագետների աշխատանքի ընդունման կամ կոնկրետ պաշտոններում նշանակման առավելագույնս ճկուն նախապայմաններ սահմանելու նպատակահարմարության հարցը և ըստ անհրաժեշտության ներկայացնել իրավակարգավորման փոփոխության վերաբերյալ առաջարկություն.

2) ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի օպերլիազորների հաստիքների համալրման նպատակով հայտարարված մրցույթի 2-րդ փուլի արդյունքների ամփոփումից հետո, ըստ անհրաժեշտության, անդրադառնալ կադրերի համալրման և կոնկրետ մասնագիտությունների գծով մասնագետների ներգրավման գրավչության բարձրացման հարցին:

3. «Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն Գոռ Ծառուկյանին՝ հանրությանը լայնորեն լուսաբանել (այդ թվում՝ սոցիալական գովազդների միջոցով) ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի քննիչների և օպերլիազորների հաստիքները նոր կադրերով համալրելու գործընթացը:

4. Հայաստանի Հանրապետությունում քրեական գործերի բաշխումը՝ ըստ քննչական ենթակայության, «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն կոմիտեի կողմից ներկայացված օրենքի նախագծի քննարկում

(Երանուհի Թումանյանց, Նիկոլ Փաշինյան)

ՀՀ արդարադատության նախարար Կարեն Անդրեասյանին՝ ձևավորված միջգերատեսչական աշխատանքային խմբում, «Իրազեկ քաղաքացիների միավորում» ՀԿ-ի ծրագրերի համակարգող Դանիել Իոաննիսյանի մասնակցությամբ, քննարկման

առարկա դարձնել վերջինիս կողմից ներկայացված առաջարկությունները և ձևավորել փոխհամաձայնեցված լուծումներ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆ

23.02.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ